

## ԲՐԱԳԻԼԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Լ., ՆԱԼԲԱՆԴՅԱՆ-ՄԱՐԳԱՐՅԱՆ Մ.  
(Բրազիլիա, ք. Սան Պաուլու)

Արգենտինայի և Ուրուգվայի հետ մեկտեղ Բրազիլիան կազմում է հարավամերիկյան երկրների այն եռանկյունին, որտեղ կենտրոնացած են տարածաշրջանում ամենասովոր հայկական համայնքները:

Բրազիլահայերի պատմությանը վերաբերող ոչ մեծաթիվ աղբյուրներից հիշատակության են արժանի 1948 թ. ասպարեզ ելած՝ Սան Պաուլուի Հայ առաքելական եկեղեցու քահանա Եզնիկ Վարդանյանի «Բրազիլիայի հայկական համայնքը»<sup>1</sup> ծավալուն հայատառ աշխատությունը և դրանից քառասուն տարի անց՝ 1988 թ. Բրազիլիայի Հայ ավետարանական եկեղեցու հոգևոր հովիվ Ահարոն Սափսոյանի<sup>2</sup> պորտուգալերեն հրատարակած «Հայաստանի պատմությունը» ուսումնասիրությունը:

Այս և տարբեր այլ աղբյուրների համաձայն, հայերի մուտքը հարավամերիկյան այդ երկիր սկսվում է XIX դ. 80-ական թթ., երբ Կ. Պոլսից և Արևմտահայաստանի գավառներից առանձին հայ ընտանիքներ հաստատվում են Բրազիլիայի արևելյան շրջաններում: 1890-ական թթ. երկրորդ կեսին, սուլթանական Թուրքիայում հայերի մշտատև հալածանքների և ջարդերի հետևանքով ակտիվանում է վերջիններիս արտահոսքը, այդ թվում նաև դեպի Ամերիկյան մայրցամաք: Բրազիլիայում հայկական համայնքի ձևավորման սկիզբն ընդունված է համարել 1890-ականի վերջերը՝ Գասպարյան ընտանիքի Սան Պաուլու ժամանումով, որն իր հետ այդ քաղաք է բերում նաև հետագայում երկրի առևտրական և արտադրական բնագավառներում մեծ ազդեցություն ձեռք բերած Նազարյան և Ջեֆերյան ընտանիքներին:

Բրազիլական և հայկական շրջանակներին լայնորեն ծանոթ է Եվրոպայում ուսանած և 1880-ականի սկզբին Բրազիլիա փոխադրված անվանի ճարտարագետ Միհրան Լատիֆի անունը, որի հեղինակությամբ Ռիո դե Ժանեյրո նահանգում և հարակից շրջաններում կառավարության պատվերներով կյանքի են կոչվում շինարարական խոշոր կառույցներ, երկաթուղիներ ու մայրուղիներ: Համայնքի կազմավորումը, սակայն, որպես այդպիսին, տեղի է ունենում 1920-1926 թթ., երբ Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Թուրքիայից և Արևելքի այլ երկրներից ժամանում և բրազիլական հողում արմատներ են ձգում փախստական հայերի մեծաթիվ խմբեր: Դա 1915 թ. Հայոց ցեղասպանություն վերապրողների աշխարհասփռման, այսպես ասած, երկրորդ ալիքն էր, երբ ազգային աղետին հաջորդած տարիներին Բեյրութի, Կահիրեի, Երուսաղեմի, Հալեպի ու Դամասկոսի որբանոցներում, հիվանդանոցներում և կացարաններում ապաստան գտած հայերն սկսում են տեղաշարժվել Ատլանտյան օվկիանո-

<sup>1</sup> Vardanian Yeznig, Rev. – *A Comunidade Armenia do Brasil, Buenos Aires, Sipan, 1948.*

<sup>2</sup> Sapsezian Aharon, Rev. – *Historia da Armenia, Sao Paulo, Paz e Terra, 1988.*

սից այն կողմ, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որի՝ բուռն զարգացում ապրող կապիտալիստական տնտեսությունն իր հերթին էժան աշխատուժի կարիք էր զգում:

Գաղթական հայերը ամերիկյան, այդ թվում՝ բրազիլական ավեր էին իջնում լիբանանյան, սիրիական, հունական, եգիպտական, թուրքական կամ էլ, մասնավորապես, նանսենյան անձնագրերով: Հարավային կիսագնդի նավահանգիստներ ժամանած գաղթական ընտանիքները կարող էին մնալ ու հիմնավորվել կամ, արդեն սեփական ուժերով, շարունակել իրենց ընթացքը դեպի հյուսիս՝ աշխատանքի և ավելի բարեկեցիկ կյանքի ակնկալիքներով: Հենց այդ գործոններով է պայմանավորված հայկական գաղթօջախների կազմավորումը Արգենտինայում, Բրազիլիայում և Ուրուգվայում:

Առաջին բնակավայրը, ուր ոտք դրեցին հայ ներգաղթողների քիչ թե շատ ստվար խմբերը, Ռիո դե Ժանեյրոն էր, որտեղ որոշ ժամանակ անց ձևավորվեց մոտ երեք հարյուր ընտանիք հաշվվող հայկական համայնք՝ իր համապատասխան կառույցներով: Բրազիլական կառավարության ցույց տված բարյացակամ ընդունելությունը և ժամանողներին տրամադրած հնարավորությունները նպաստեցին այն բանին, որ վերջիններս անարգել տեղաշարժվեն նահանգից նահանգ՝ փնտրելով հիմնավորման համար ավելի նպաստավոր բնակավայրեր:

Դատելով ներկայումս գործող համայնքային կառույցների և հարանվանությունների գրանցման մատյաններից՝ հայերը բնակվում կամ բնակվել են Բրազիլիայի այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Սեարան, Մատու Գրոսսուն, Մատու Գրոսսու դու Սուլը, Մինաս Ժերաիսը, Ռիո դե Ժանեյրոն, Ռիո Գրանդե դու Սուլը, Ֆեդերալ շրջանը (մայրաքաղաքի վարչական օկրուգը) և Սան Պաուլուն: Վկայություններ կան այլ նահանգներում, մինչև իսկ Ամազոնիայի շրջանում ապրող հայերի վերաբերյալ, սակայն դրանք վերը նշված համայնքային կառույցներում գրանցված չեն: Իրականում բրազիլահայ համայնքը, որն այսօր կենտրոնացած է Սան Պաուլու, Օզասկո և Ռիո դե Ժանեյրո քաղաքներում, հայկական այն ընտանիքների միավորման արդյունքն է, որոնք իրենց կյանքը սկսել են ներքին շրջաններում և աստիճանաբար կենտրոնացել քաղաքային խոշոր բնակավայրերում: Երկրի տարբեր նահանգների այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Կամպո Գրանդեն, Պորտու Ալեգրեն, Սանտա Մարիան, Սան Ժոզե դու Ռիու Պրետուն, Անապոլիսը, Արասատուբան, Նովա Պալեստինան, Պենապոլիսը, Ուբերաբան, Գուաշուպեն, Ֆորտալեզան, Օզասկոն, Ռիո դե Ժանեյրոն ու Սան Պաուլուն, դրա օրինակներն են:

Նոր ժամանած հայերի բացարձակ մեծամասնությունը, անձանթ լինելով երկրին ու նրա բարքերին, չտիրապետելով պորտուգալերենին<sup>3</sup>, զբաղվում էր մանրավաճառությամբ՝ շրջելով մեկ բնակավայրից մյուսը: Նախնական այդ փուլին հաջորդեց կայունացման ժամանակաշրջանը, երբ արդեն նյութապես ամրապնդված և երկրին հարմարված հայերն աստիճանաբար սկսեցին ընդգրկվել արտադրական՝ կոշիկի ու տեքստիլ արդյու-

<sup>3</sup> Բրազիլիան Լատինական Ամերիկայի միակ երկիրն է, որի պետական լեզուն պորտուգալերենն է: Մյուս բոլոր պետություններում՝ նախկին իսպանական գաղութներում, այդ լեզուն իսպաներենն է:

նաբերության, ինչպես նաև առևտրի ու սպասարկումների ոլորտներ, բացեցին սեփական ձեռնարկություններ ու խանութներ: Ասպարեզ եկան մեծահարուստ հայեր՝ տնտեսության տարբեր բնագավառներում:

Հայերի բարեկեցության բարձրացումը և նյութական ամրապնդումը հասցրեցին համայնքի կազմակերպական ակտիվացմանը: Վերջինս չքհապաղեց ձեռնամուխ լինել հիմնական խնդրին՝ գաղութային հաստատությունների ստեղծմանը: 1930-ական թվականների սկզբին և դրան հաջորդող մեկ-երկու տասնամյակների ընթացքում, մինչև Երկրորդ աշխարհամարտ, ստեղծվեցին համայնքի եկեղեցական ու կրթական հաստատությունները, մշակութային ու երիտասարդական կազմակերպությունները, հիմնական քաղաքական կուսակցությունների մասնաճյուղերը, որոնք հանդես եկան մշակութային տարբեր կազմակերպությունների անվան տակ:

Համայնքի պատմության երկրորդ փուլը կարելի է համարել 1950-ական թթ. վերջը – 1960-ականի սկիզբը, երբ Լիբանանից, Սիրիայից, Թուրքիայից, Ֆրանսիայից և Եգիպտոսից ժամանեցին հայերի նոր խմբեր, որոնք շարունակեցին կենտրոնանալ Սան Պաուլու, Ռիո դե Ժանեյրո, Պորտու Ալեգրե, Ֆորտալեզա քաղաքներում, հյուսիս-արևելյան և հարավային մի քանի նահանգների քաղաքներում ու բնակավայրերում:

Լինելով տարբեր մասնագիտությունների տեր, ժամանելով Սփյուռքի այն երկրներից, որտեղ հայեցի դաստիարակության և հայապահպանության գործը, այդ թվում՝ հայոց լեզվի դասավանդումը, դրված էր ավելի ամուր հիմքերի վրա, նորեկները թարմություն հաղորդեցին բրազիլահայ համայնքին, նպաստեցին նրա գործունեության աշխուժացմանը:

1960-ական թթ. հետո, մինչև այսօր, այդ երևույթը, այսինքն՝ Բրազիլիայի հայկական համայնքի «թարմացումը» այլ երկրների հայերի մուտքով, տեղի չունեցավ: Սփյուռքի հեռավոր համայնքների «համալրումը» նոր ուժերով կատարվեց Մերձավոր Արևելքի հայկական ուժեղ համայնքների թուլացման հաշվին, որոնք, այդ տարածաշրջանում քաղաքական բարդ իրավիճակի և պատերազմների ու դրանց շարունակական վտանգի պատճառով, ինչպես հայտնի է, ստիպված եղան լքել սեփական երկրները՝ ճանապարհ բռնելով գլխավորապես դեպի ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա:

Բրազիլիան հայաբնակ այն հազվագյուտ երկրներից է կամ գուցե միակը, ուր Խորհրդային Միության փլուզումից հետո մուտք չի գործել ոչ մի հայաստանցի ընտանիք, ոչ մի «նոր հայ»: Բացառություն են կազմում մոտ 10-15 հայ մասնագետներ, հիմնականում ճարտարագետներ և մարզիչներ, որոնք դեռևս խորհրդային շրջանում պայմանագրային հիմունքներով աշխատանքի են գործուղվել Բրազիլիա և մինչև օրս ապրում և աշխատում են երկրի հարավային ու հարավ-արևելյան նահանգներում: Հետաքրքրական է, որ Բրազիլիան «շրջանցելը» բնորոշ է նաև խորհրդային նախկին այլ հանրապետություններին, հատկապես ռուսներին: Մի բան, ինչը թերևս կարելի է բացատրել երկրում գործարար նախաձեռնությունների համար անսովոր պայմաններով, հարկային խճողված համակարգով և, գուցե, կլիմայական պայմաններով:

Իրադրությունը տարբեր է հարևան Արգենտինայում, որտեղ հայաստանցի հայերի թիվը հասնում է մոտ չորս-հինգ հազարի: «Էթնիկ» հայե-

րի՝ նման մեծաքանակ խմբերում կան, բնականաբար, հայաստանյան բուհերը և կրթական այլ հաստատություններն ավարտած բազմաթիվ մասնագետներ՝ ուսուցիչներ, մանկավարժներ, պատմաբաններ, նկարիչներ, երաժիշտներ, պարուսույցներ, թատերագետներ և ուրիշներ, որոնց պակասը խիստ զգացվում է հատկապես հեռավոր ոչ մեծ համայնքներում, և որոնք կարող են լրացուցիչ ուժ դառնալ նրանց համար՝ հայապահպանության ուղղությամբ նրանց մղած ամենօրյա պայքարում:

Ինչպես արդեն ասվեց վերևում, բրազիլահայերի հիմնական մասը կենտրոնացած է Սան Պաուլու նահանգում, մասնավորապես, այդ նահանգի նույնանուն մայրաքաղաքում: Սան Պաուլու նահանգի Օզասկո քաղաքում ապրում է մոտ 3-4 հազար հայ, Ռիո դե Ժանեյրոյում՝ 400-500, մայրաքաղաք Բրազիլիայում՝ շուրջ 300 մարդ: Մնացած մասը ցրված է երկրի տարբեր նահանգներում: Բրազիլահայ համայնքի ներկայիս թիվն ընդունված է համարել 20-25 հազար մարդ: Առանձին դեպքերում, այդ թվում նաև բրազիլացիների կողմից, շրջանառության մեջ է դրվում 35-40 հազար, նույնիսկ՝ 60-80 հազարանոց քանակը: Եթե վերջինը կարող է չափազանցված լինել, ապա նախորդը (35-40 հազար), մեր կարծիքով, ավելի մոտ է իրականությանը՝ հետևյալ պատճառներով: 1948 թ., երբ համայնքը դեռ նոր էր ձևավորված և կոլեկտիվ համակեցության իմաստով ավելի համախումբ էր ու տեղեկատվական տեսակետից ավելի «ընթեռնելի», հայերի թիվը երկրում գնահատվում էր 20 հազար մարդ: Դա հաստատում է նաև մեր հոդվածի սկզբում հիշատակված՝ համայնքի ստեղծման պատմությանն ու գործերին քաջածանոթ Եզնիկ քահանա Վարդանյանն իր «Հայերը Բրազիլիայում» գրքում: Եթե ելակետ համարենք այդ թիվը, ապա պետք է ընդունենք, որ 1948-ից մինչև 2008 թ., այսինքն՝ 60 տարվա ընթացքում, բրազիլահայերը ժողովրդագրական աճ չեն ապրել, ինչը գիտական առումով բացատրելի չէ: Դրա հետ մեկտեղ, բրազիլական պաշտոնական վիճակագրության համաձայն, նման աճի տեմպերը երկրում 1920-1940 թթ. կազմել են 8,6%, 1940-1990 թթ.՝ 6,2% և հետո միայն աստիճանաբար նվազել են և 2000 թ. հասել 2-2,2%-ի՝ մոտենալով եվրոպական զարգացած երկրների համանման ցուցանիշներին:

Համաձայն Մինաս Ժերաիս նահանգի դաշնային համալսարանի պրոֆեսոր, անվանի սոցիոլոգ Ֆաուստո Բրիտոյի<sup>4</sup>, 1940-2000 թթ. միջև ընկած 60 տարվա ընթացքում երկրի բնակչությունը ավելացել է 129 մլն. մարդով, այսինքն՝ յուրաքանչյուր տասնամյակում աճել է 21,5 միլիոնով:

Կարծում ենք՝ բրազիլահայերը, անկախ իրենց բնորոշ ազգային ժողովրդագրական առանձնահատկություններից, չէին կարող դուրս մնալ վերը նշված գործընթացից, չընդգրկվել աճի թեկուզ միջին ցուցանիշների մեջ: Դեռ չհաշված աճի մեխանիկական կողմը, այսինքն՝ համայրումը դրսից, ինչի մասին արդեն հիշատակել ենք:

Ամեն դեպքում այսօր, մեր հայրենակիցների՝ Բրազիլիա մուտք գործելուց մոտ իննսուն տարի անց, տեղի հայկական համայնքը ներկայանում է

<sup>4</sup> Brito Fausto, *A transicao demografica no Brasil, Belo Horizonte, Setembro 2007.*

որպես բարեկեցիկ, լավ կազմակերպված և գործունյա մի ամբողջություն, որի անդամները հրաշալի ներդաշնակությամբ ինտեգրված են բրազիլական հասարակությանը և, լինելով իրենց նոր հայրենիքի հավատարիմ քաղաքացիները, հնարավոր բոլոր ջանքերը գործադրում են պահպանելու իրենց ազգային ինքնությունը, հավատն ու սովորությունները:

Բրազիլական իշխանությունները, պետական ու հասարակական մարմիններն ու նրանց ամենատարբեր ներկայացուցիչները համամիտ են այն բանում, որ անցած տասնամյակների ընթացքում հայերն իրենց մեծ ավանդն են ներդրել երկրի զարգացման և առաջընթացի մեջ:

Իրենց գործունեության առաջին շրջանում հայերն ավելի նկատելի էին Բրազիլիայի կոշիկի արտադրության և տեքստիլ արդյունաբերության մեջ, ինչը շարունակվում է մինչև այսօր՝ այն տարբերությամբ, որ նրանք արտադրողներից փոխարկվել են կոշկեղենի առևտրականների՝ հաճախ հասնելով այդ բնագավառում տիրապետող դիրքերի, իսկ տեքստիլի փոխարեն ներկայումս որոշակի չափով մտել են երկրի լավագույն հագուստեղեն արտադրողների շարքը՝ երբեմն ծանրակշիռ տեղ գրավելով վերջին նորաձևությունների ստեղծման ու տարածման գործում:

Դրա հետ մեկտեղ, բրազիլահայությունը, ինչպես դա վկայում են նաև բրազիլացի քաղաքական գործիչներն ու Մփյուռքի իրականությանը ծանոթ դիվանագետները, շահեկանորեն առանձնանում է նրանով, որ նրա անդամներին, բացի ավանդական առևտրական ասպարեզից, հաջողվել է մուտք գործել և լավագույնս ներկայանալ այլ ոլորտներում, Բրազիլիայի հասարակական կառույցի բազմաթիվ օղակներում՝ գիտություն, շինարարություն, բանկային-ֆինանսական գործ, բժշկություն, իրավաբանություն, կինո և շոու բիզնես, նույնիսկ զինվորական գործ, դիվանագիտություն: Այդ ասպարեզներում ճանաչված անուններ են՝ երկրի կարևորագույն՝ Սան Պաուլուի տեխնոլոգիական ուսումնասիրությունների կենտրոնի (տարեկան ավելի քան 700 մլն. դոլար ծախսային բյուջեով) տնօրեն, անվանի գիտնական Վահան Հակոբյանը, Բրազիլիայի քաղաքացիական և ռազմական նավահանգիստների նախկին տնօրեն, ռազմածովային ուժերի ծովակալ Ջավեն Պողոսյանը, երկրի բժշկական ակադեմիայի իսկական անդամ Լևան Պողոսյանը, միջազգային համբավի տեր, մանկաբույժ Անդրանիկ Մանիսաջյանը, բանկային խոշոր գործիչներ Վարուժան Բուրմայանը, Անդրանիկ և Անդրե Կիսաջիկյանները, անվանի կինոտեսաբան, Սան Պաուլուի միջազգային կինոփառատոնի հիմնադիր Լեոն Կակոֆը, բրազիլական կինոյի և հեռուստատեսության առաջին մեծության աստղեր Արաքսի Բալբասյանը, Ստեփան Ներսիսյանը, Դենիս Դերկյանը և շատ ուրիշներ: Բրազիլիայի դիվանագիտական համակարգում՝ նրա կենտրոնական ապարատում և արտասահմանյան ներկայացուցչություններում ծառայում են քսանից ավելի հայազգի դիվանագետներ, այդ թվում՝ չորս արտակարգ և լիազոր դեսպաններ:

1960-ական թվականներից հայերը մուտք են գործում նաև պետական-քաղաքական ասպարեզ՝ տալով այնպիսի հայտնի անուններ, ինչպիսիք են՝ Մատու Գրոսսու դու Սուլ նահանգի նահանգապետ Պեդրո Պետրոսյանը, Բրազիլիայի տնտեսական պլանավորման նախարար, հետագայում դաշնային պատգամավոր Անտոնիո Կանդիբրը, Ազգային կոնգրեսի պատգամավորների պալատի անդամներ Ուբիրաժարա Քոթենեջյանը, Ֆեր-

նանդո Գասպարյանը, Պեդրո Պետրոսյան Ֆիլյոն, Սան Պաուլուի նահանգային խորհրդարանի պատգամավոր Կառլոս Կրլակյանը, Օգասկո քաղաքի առաջին քաղաքապետ Հրանտ Սանազարը, Սան Պաուլուի քաղաքային կառավարության միջազգային հարաբերությունների քարտուղար Ելենա Գասպարյանը, ինչպես նաև քաղաքային խորհրդարանների մի շարք պատգամավորներ, միջին մակարդակի բազմաթիվ հայազգի ծառայողներ ու պաշտոնյաներ:

Արդեն 1924 թ., այն է՝ համայնքի կազմավորման նախաշեմին, Հայ առաքելական եկեղեցին Բրազիլիայում իր ներկայացուցիչն ուներ:

Ներկայումս, իրենց ներկայացուցչական և վարչական մարմինների հետ համատեղ, երկրում գործում են չորս հայկական եկեղեցիներ, այդ թվում՝ Սան Պաուլուի «Ս. Գևորգ» եկեղեցին, որը բրազիլահայ թեմի կենտրոնն է՝ իր քսանվեց տարիների անփոփոխ առաջնորդ, Էջմիածնի Հայ առաքելական եկեղեցու բարձրագույն հոգևոր խորհրդի անդամ, արքեպիսկոպոս Տաթև Ղարիբյանի գլխավորությամբ, Օգասկոյի Հայ առաքելական եկեղեցին, որի հովիվը Սան Պաուլուի Հայ առաքելական եկեղեցու ավագ քահանա Պողոս Պարոնյանն է:

Սան Պաուլուի եկեղեցուն կից արդեն մոտ ութ տասնամյակ իր աշակերտներին հայեցի կրթություն է տալիս «Հայ ազգային Դուրյան» երկրորդական վարժարանը՝ շուրջ 120 աշակերտներով (տնօրեն՝ տեր Եզնիկ ավագ քահանա Կյուզեյան): Նրա հարևանությամբ գործում է նաև «Գրեգորիո Մավյան» մանկապարտեզը, հրատարակվում է «Միփան» ամսագիրը:

1935 թ. հիմնադրվել և մինչև օրս գործում է «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Հայ կաթողիկե եկեղեցին՝ Հարավային Ամերիկայի կաթողիկե համայնքի հոգևոր առաջնորդ, եպիսկոպոս Վարդան Պողոսյանի գլխավորությամբ: Հայ ավետարանչական կենտրոնական եկեղեցին իր գոյությունը սկսել է 1931 թ., նրա ներկայիս վարչական ղեկավարն ու հոգևոր հովիվն է վերապատվելի Ռոյ Աբրահամյանը: Առկա է նաև «Հայ ավետարանական եղբայրներ» եկեղեցին՝ Կարո Ահարոնյանի գլխավորությամբ: Նշենք, որ Բրազիլիայում (դա՛ վերաբերում է նաև Հարավային Ամերիկայի հայաշատ մյուս երկու երկրներին՝ Արգենտինային և Ուրուգվային) Հայ առաքելական եկեղեցու անթիլիասական թևը ներկայացված չէ:

Համայնքում քիչ չեն մշակութային, բարեգործական, երիտասարդական և հասարակական այլ կազմակերպություններն ու միությունները, որոնք տասնամյակներ ի վեր լծված են տեղի հայությանն ու նրա երիտասարդ սերնդին հայեցի ոգով դաստիարակելու գործին: Դրանցից հիմնականները հետևյալներն են.

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Բրազիլիայի մասնաճյուղը, որը հիմնադրվել է 1964 թ., գրավում է ընդարձակ տարածք Սան Պաուլուի հեղինակավոր թաղա-

մասերից մեկում՝ իր հրապարակով, մեծ ու փոքր մարզասրահներով, հանդիսությունների սրահով, բացօթյա հավաքատեղիներով, դպրոցական խոշոր շենքով, որտեղ մինչև 2006 թ. սկիզբը գործում էր «Պարեն և Ռեժինա Բազարյաններ» երկրորդական վարժարանը: Հրատարակվում է «Օրհան» հանդեսը:

«Հայկական ակումբ» համալիրը դաշնակցականամետ խոշոր հաստատություն է, հիմնադրվել է 1941 թ. Սան Պաուլուի լավագույն թաղամասերից մեկում, ընդարձակ հողատարածքի վրա, ունի մոտ հինգ-վեց հարյուր մարդու համար նախատեսված հանդիսությունների սրահ, ճաշարան, փակ և բաց խաղահրապարակներ, լողավազան, գրադարան, թենիսի և մանկական հրապարակներ: Ակումբին հաջողվել է երկարատև ընդմիջումից հետո վերականգնել «Վահագն Մինասյան» երգչախմբի գործունեությունը, կազմակերպել հայոց լեզվի դասընթացներ: Գործում են տարբեր մարզաձևերի խմբեր, թողարկվում է պարբերական տեղեկագիր:

ՀՅ Դաշնակցությունը, որը գործում է «Արմենիա մշակութային ընկերակցություն» անվան տակ, ներկայացված է «Դրո» կոմիտեով, որը կազմակերպորեն ենթարկվում է Բուենոս Այրեսում գործող Հարավային Ամերիկայի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեին: 2003 թ. ստեղծվել է «Հայ դատի» հանձնախումբը, որի անփոփոխ ղեկավարն է «Դրո» կոմիտեի վերջին տարիների հերթապահ, իրավաբան Սիմոն Խրիմյանը: Դաշնակցության ջանքերով 2005 թ. Սան Պաուլուի «Տրիանոն» ռադիոկայանի ալիքներով սկսեց եթեր արձակվել «Արմենիա վիվա» (Ապրող Հայաստան) կիրակնօրյա ռադիոժամը, ստեղծվեց տեղեկատվորեն հազեցած, հետևողականորեն նորոգվող «Արմենիա» ինտերնետային կայքը, հիմնվեց «Համագային» կրթական և մշակութային միության մասնաճյուղը:

Հայ օգնության միությունը (ՀՕՄ), կամ Կարմիր խաչը, ներկայացված է Սան Պաուլուի «Արփի» և Օգասկոյի «Մասիս» մասնաճյուղերով:

Համայնքում գործում են նաև «Թեքեյան» մշակութային միության մասնաճյուղը, Մարաշի հայրենակցական միությունը, «Արարատ մշակութային միություն» անվամբ՝ Մոցիալ դեմոկրատական հնչակյան կուսակցությունը: Ռամկավարները համախմբված են ՀԲԸՄ-ի շուրջ:

1962 թ. հայ մտավորական Եսայի Կռուզյանի նախաձեռնությամբ Սան Պաուլուի համալսարանի փիլիսոփայության, լեզվի և հասարակական գիտությունների ֆակուլտետում հիմնվեց հայագիտության ամբիոնը՝ միակը հարավամերիկյան տարածաշրջանում: Ամբիոնն իրականացնում է գիտահետազոտական աշխատանքներ հայոց լեզվի ու գրականության, մշակույթի և պատմության տարբեր հարցերի վերաբերյալ, հրատարակում առանձին ուսումնասիրություններ, ձեռնարկներ ու հոդվածներ: Նրա դասախոսները մասնակցում են Հայաստանում կազմակերպվող հայագիտական միջազգային կոնֆերանսներին ու գիտաժողովներին:

Անցած 45 տարիների ընթացքում գիտամանկավարժական այդ հաստատության կողմից հայազգի և տեղացի շրջանավարտներին տրվել են այդ բնագավառում նրանց մասնագիտացումը վկայող հարյուրավոր դիպլոմներ: Եթե առաջին շրջանում սովորողների թվի մեջ գերակշռում էին հայերը, ապա հետագայում աստիճանաբար մեծամասնություն կազմեցին բրազիլացի երիտասարդները: Վերջին մեկուկես-երկու տասնամյակներում ամբիոնը հայազգի ուսանողներ չունի:

Հարկ է նշել, որ ինչպես առհասարակ Միյուռոքում, այնպես էլ բրազիլահայության մեջ առկա են այն բոլոր դժվարությունները, որոնք ծառայել են նրանց առջև երիտասարդ

սերնդի ազգային դաստիարակության, հայոց լեզվի դասավանդման ու տարածման ասպարեզում:

Լինելով բազմազգ երկիր, որն իր էթնիկական կազմում ընդգրկում է տարբեր ռասայական խմբերի 60-ից ավելի ազգեր ու ազգություններ, Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունը, նրա պետական-կառավարական համակարգը ընդգծված ուշադրություն են դարձնում ազգային փոքրամասնությունների հոգևոր-մշակութային պահանջմունքներին, հասարակական համակարգում նրանց ներդաշնակ ներգրավվածությանը, պետական-օրենսդրական միջոցներով պայքարում են ռասայական խտրականության, ազգամիջյան հնարավոր տարածայնությունների դրսևորումների դեմ: Ազգային այդ քաղաքականության շրջանակներում, 2004 թ. սկզբին Ման Պաուլու նահանգի<sup>5</sup> Օրենսդիր ժողովին կից, երկրում առաջինը ստեղծվեց «Ազգային փոքրամասնությունների խորհրդարանական խորհուրդը», որին, ի թիվս 16 տարբեր համայնքների ներկայացուցիչների, մաս են կազմում նաև բրազիլահայ համայնքի երկու անդամ, որոնցից մեկը այդ խորհրդի փոխնախագահն է:

Ի նշան հայերի նկատմամբ հարգանքի, բրազիլական տարբեր բնակավայրերի, առաջին հերթին՝ Ման Պաուլու քաղաքի մի շարք տարածքներ, հրապարակներ ու փողոցներ անվանակոչվել են «Արմենիա» անունով: Քաղաքի՝ նույն անունը կրող հրապարակում են տեղակայված Հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական եկեղեցիները, Մարաշի հայրենակցական միությունը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, որը Ման Պաուլուի քաղաքապետարանը հայտարարել է պետության կողմից պաշտպանվող մշակութային ժառանգության օբյեկտ: Հրապարակին հարող տարածքում է գտնվում նաև «Արմենիա» անունը կրող մետրոյի վերգետնյա կայարանը, որը ձևավորված է հայկական խաչքարերով և ազգային այլ խորհրդանիշներով: «Արմենիա» է անվանակոչված նաև քաղաքի կենտրոնական մասերից մեկում 1995 թ. կառուցված հսկա վերգետնյա կամուրջը:

Համայնքի պատմության երրորդ փուլը կարելի է համարել Հայաստանի անկախացումից հետո ընկած ժամանակաշրջանը, երբ ստեղծվեց ազգային-քաղաքական մի նոր իրադրություն, որն իր հերթին նոր բովանդակություն հաղորդեց սփյուռքահայության կողմից տարվող հայապահպանական-հայրենասիրական աշխատանքներին: Դեռևս խորհրդային իշխանության տարիներին համայնքը որոշակի կապեր է պահել Մայր հայրենիքի հետ, ընդունել բազմաթիվ անվանի գործիչների, մտավորականների, տարբեր պատվիրակությունների ու ճանաչված գեղարվեստական խմբերի, եկեղեցական առաջնորդների: Հայաստան են այցելել համայնքային կազմակերպությունների մի շարք ներկայացուցիչներ ու ղեկավարներ: Մփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն համայնքային միություններին, դպրոցներին ու անհատներին կանոնավոր կերպով առաքել է հայատառ մամուլ ու գրականություն, դասագրքեր, քարտեզներ և տպագրական այլ նյութեր:

1988 թ. վերջին և 1989-ի սկզբներին համայնքը եռանդուն ջանքեր գործադրեց Սպիտակի ավերիչ երկրաշարժից տուժած բնակչությանն օգնելու համար: Հավաքվեց և բրազիլական զինված ուժերի տրամադրած ինքնաթիռով Հայաստան ուղարկվեց մոտ 40 տոննա սննդամթերք, դեղորայք և հագուստ: Հիմնադրվեց «Հայաստանի վերակառուցման

<sup>5</sup> Բրազիլիայի Դաշնային Հանրապետության խոշորագույն այս նահանգին, 40 միլիոնից ավելի բնակչությամբ, բաժին է ընկնում երկրի ՀՆԱ-ի մոտ 38%-ը:



բրազիլական կոմիտեն», այն է՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի բրազիլական մասնաճյուղը, որը նշված և հետագա տարիներին մեծ աշխատանք տարավ նյութական ու բարոյական աջակցություն ցուցաբերելու հայրենի նորանկախ պետությանը՝ նրա առջև ծառայած բազմաթիվ խընդիրների լուծման ճանապարհին՝ երկրաշարժի գոտուց մինչև Արցախ, մայրաքաղաքի հիվանդանոցներից մինչև ծնողագուրկ երեխաներ: Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունը առաջին երկրներից էր, որը 1991 թ. դեկտեմբերին ճանաչեց Հայաստանի Հանրապետության անկախությունը և նրա հետ հաստատեց դիվանագիտական հարաբերություններ: 1998 թ. համայնքը ոգևորությամբ ընդունեց Հայաստանի կառավարության որոշումը Սան Պաուլուում ՀՀ գլխավոր հյուպատոսություն հիմնելու վերաբերյալ, զգալի նյութական օգնություն ցուցաբերեց այդ երկրում հայրենի պետության առաջին դիվանագիտական ներկայացուցչության հաստատմանը: Սան Պաուլուի ՀԲԸՄ-ի կողմից տրամադրվեց ընդարձակ տարածք, որը համայնքի ուժերով ենթարկվեց հարդարման ու կահավորման:

Հայաստանի գլխավոր հյուպատոսության՝ երկրում ՀՀ միակ դիվանագիտական մարմնի արդեն մոտ մեկ տասնամյակ շարունակվող ներկայությունը խթանեց ոչ միայն երկու երկրների միջև տարբեր բնագավառներում համագործակցության զարգացումը, այլև բրազիլահայ համայնքի՝ Հայաստանի հետ բազմաբնույթ կապերի ընդլայնումն ու խորացումը: Այդ ներկայության շնորհիվ համայնքը հնարավորություն ունեցավ ընդունելու և հյուրընկալելու ՀՀ նախագահին, փոխվարչապետին, Սահմանադրական դատարանի նախագահին ու նրանց գլխավորած պատվիրակությունների անդամներին, Հայաստանի մի քանի նախարարների, Ազգային ժողովի պատգամավորների ու մարզպետների, խոշոր գործարարների ու մշակույթի գործիչների, գեղարվեստական խմբերի ու անհատ կատարողների, նկարիչների ու երաժիշտների, ընդ որում, ամեն անգամ նկատելի աջակցություն բերելով այդ այցելությունների կազմակերպմանն ու իրականացմանը: Հիշատակման են արժանի Հայոց վեհափառ հայրապետ Գարեգին 2-րդ կաթողիկոսի այցի կապակցությամբ Բրազիլիայի լավագույն ցուցասրահներից մեկում՝ Սան Պաուլուի «Պինակոտեկայում» 2004 թ. մայիսին իրականացված «Էջմիածնի գանձերը», «Սոֆիգա» բանկի մեծ սրահում 2002 թ. մայիսին կազմակերպված Երևանի պետական պատկերասրահի ֆոնդերի նկարների ցուցահանդեսները, ժամանակակից հայ նկարչության վարպետների գործերի երկու խոշոր ցուցադրումները, Սվետլանա Նավասարդյանի, Անահիտ Մխիթարյանի և ժամանակակից հայ ականավոր այլ երաժիշտների համերգները:

Համայնքի վերջին շրջանի մշակութային ձեռնարկների մեջ առանձնակի տեղ են գրավում Սան Պաուլու քաղաքի «Էմիգրանտների հուշահամալիրում» (Memorial do Imigrante) 2000 թ. կազմակերպված՝ «Հայերը Բրազիլիայում», ինչպես նաև քաղաքային կառավարության մշակույթի քարտուղարության կենտրոնական սրահում Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված լայնածավալ ցուցահանդեսները:

Բրազիլահայ համայնքը նախապատրաստեց ու իրականացրեց կարևորագույն միջոցառումների մի ամբողջ շարք՝ նվիրված Հայոց ցեղասպանության 90-ամյակին: Միջուրբահայ համայնքների մեջ այդ տարելի-

ցի կապակցությամբ նրա մշակած ծրագիրն իր բազմազանությամբ ու հագեցվածությամբ համարվեց լավագույններից մեկը:

Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության հիմնադրման հետ աշխուժացան համայնքային պատվիրակությունների, հայ զբոսաշրջիկների խմբերի, առանձին անհատների այցելությունները Հայաստան. բրազիլահայերի մի շարք պատվիրակություններ մասնակցեցին Հայաստանում տեղի ունեցող համազգային հայագիտական, մշակութային, բժշկական, երիտասարդական և այլ կոնֆերանսներին ու հավաքներին, համազգային միջոցառումներին ու հոբելյանական հանդիսություններին, խորհրդարանական հավաքներին ու Համահայկական խաղերին, Հայաստան-Սփյուռք խորհրդատուներին:

2001 թ. Հայաստանում Քրիստոնեության տարածման 1700-ամյա հանդիսությունների կապակցությամբ Երևան ժամանած բրազիլահայ պատվիրակությունը մասնակցեց մայրաքաղաքում «Բրազիլիայի հրապարակի» բացման և հուշաքարի տեղադրման հանդիսավոր արարողությանը: Սան Պաուլու բերվեց և նահանգային խորհրդարանի բակում տեղադրվեց այդ նահանգի բնակչությանը ՀՀ կառավարության նվիրաբերած խաչքար-հուշարձանը:

2006 թ. սեպտեմբերին բրազիլիական կառավարության որոշմամբ Երևանում բացվեց Բրազիլիայի Դաշնային Հանրապետության դեսպանությունը: Հայաստան մեկնելուց առաջ այդ բարեկամ երկրի նորանշանակ դեսպան Ռենատե Ստիլլեն հանդիպումներ ունեցավ և գործնական կապեր հաստատեց բրազիլահայ համայնքի բոլոր հիմնական կրոնական և աշխարհիկ կազմակերպությունների առաջնորդների ու ղեկավարների հետ, ծանոթացավ համայնքի գործունեությանը:

2007 թ. դեկտեմբերին ընդունվեց ԲԴՀ մայրաքաղաքում Հայաստանի դեսպանություն հիմնելու մասին ՀՀ նախագահի որոշումը, որով երկու երկրների միջև հարաբերությունները կբարձրացվեն որակական նոր աստիճանի՝ ի շահ երկու բարեկամ երկրների և ժողովուրդների միջև համագործակցության զարգացման, որի շնորհիվ, բնականաբար, նոր, բարենպաստ պայմաններ ու հնարավորություններ կստեղծվեն նաև բրազիլահայ համայնք-Հայրենիք կապերի հետագա ընդլայնման համար:

## БРАЗИЛЬСКАЯ АРМЯНСКАЯ КОЛОНИЯ

ЕГИАЗАРЯН Л., НАЛБАНДЯН-МАРГАРЯН М. (Бразилия, г. Сан-Паулу)

### Резюме

Армяне появились в Бразилии в 80-х гг. XIX в. Первые армянские семьи из Константинополя и западноармянских областей обосновались в восточных районах южноамериканских стран. Армянская колония в Бразилии возникла в 1890-х гг. и окончательно сформировалась в 1920-х гг. в результате переселения большого потока армян из Сирии, Ливана, Египта, Турции и других

ближневосточных стран. Армяне обосновались в Сеаре, Мату-Гроссу, Минас-Жераисе и др. областях, а также в Рио-де-Жанейро и Сан-Паулу. Ныне бразильская армянская колония сосредоточена в Сан-Паулу, Озаско и Рио-де-Жанейро.

Второй этап истории армянской колонии охватывает период с 1950 по 1960-ые гг., когда в Бразилию переселились новые группы армян из ближневосточных стран, которые нашли пристанище в Сан-Паулу, Рио-де-Жанейро и Порту-Алегри, а впоследствии – в Форталезе и иных городах. В городе Озаско провинции Сан-Паулу живет около 3000-4000 армян, в Рио-де-Жанейро – 400-500 тыс., а в столице – в г. Бразилия – около 300 армян, остальная же часть переселенцев – в других областях страны. Общее число армян в Бразилии составляет 35-40 тыс. За минувшие десятилетия армяне внесли ощутимый вклад в развитие страны. Они работают в сфере науки, промышленности, медицины, строительства, в финансово-банковской системе, а также вовлечены в государственно-политическую и военную структуру страны.

В Бразилии действуют 4 армянские церкви, в их числе церковь Св. Геворка в Сан-Паулу и армянская апостольская церковь в Озаско. При церкви Св. Геворка создана “Армянская национальная семинария Дурьян” (около 120 учеников), а при семинарии – детский сад “Грегорио Мавьян”, с 1935 г. издается журнал “Сипан”. Действует также армянская католическая церковь Св. Григория Просветителя, а с 1931 г. – армянская евангелическая церковь, а также “Армянская церковь братьев - евангелистов”.

В Бразилии, также как и в Аргентине и Уругвае армянскую апостольскую церковь представляет лишь Эчмиадзин.

В колонии действуют культурные, благотворительные, молодежные организации и союзы. В жизни колонии немалую роль играют армянские национальные партии – Армянская революционная партия Дашнакцутюн, оциал-демократическая партия Гнчак и партия Рамкавар.

В Сан-Паулу открыто главное консульство РА. Бразильская армянская колония поддерживает тесные отношения с Арменией.